ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ՌՎ Պրոջեկտս ՍՊԸ-ն ՀՀԱՆԳԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/74 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի				
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
2	----	----	----	----	Լաբորատոր սառնարանը նախատեսված է պատվաստանյութերի, դեղագործական պատրաստուկների, բակտերիալ կուլտուրաների և լաբորատոր նմուշների պահպանման համար լաբորատորիաներում, բուժհաստատություններում, գիտահետազոտական կենտրոններում և դեղատներում: Սարքավորումը պետք է լինի նոր, նախկինում չօգտագործված, սերիական արտադրության և ապահովի սահմանված

					ջերմաստիճանի կայուն պահպանում շահագործման ամբողջ ընթացքում։ Սառնարանի օգտակար ծավալը պետք է կազմի առնվազն 310 լիտր, իսկ ընդհանուր ծավալը՝ առնվազն 380 լիտր։ Աշխատանքային ջերմաստիճանային միջակայքը պետք է լինի 0 °C-ից մինչև +8 °C, իսկ գործարանային սահմանված ջերմաստիճանը՝ +5 °C։ Ջերմաստիճանի հավասարաչափ բաշխումը խցիկի ամբողջ ծավալում պետք է լինի ոչ վատ, քան ±3 °C, իսկ ջերմաստիճանի կայունությունը՝ ոչ վատ, քան ±1 °C։ Սարքավորումը պետք է ապահովի կայուն աշխատանք շրջակա միջավայրի +10 °C-ից մինչև +32 °C ջերմաստիճանի և մինչև 65 % հարաբերական խոնավության պայմաններում։ Աղմուկի մակարդակը պետք է լինի ոչ ավելի, քան 42 դԲ(A)։ Սնուցումը պետք է իրականացվի 230 Վ ±10 %, 50 Հz էլեկտրական ցանցից։ Սպառվող հզորությունը պետք է լինի ոչ ավելի, քան 320 Վտ, իսկ օրական էլեկտրաէներգիայի սպառումը՝ ոչ

						ավելի, քան 3.5 կՎտ•ժ/24 ժամ։ Սարքավորման արտաքին կորպուսը պետք է պատրաստված լինի հակակոռոզիոն պաշտպանությամբ ցինկապատ պողպատից՝ PVC ծածկույթով, իսկ ներքին խցիկը՝ հարվածադիմացկուն ջերմաձևավորված ABS պլաստիկից։ Ներքին և արտաքին անկյունները պետք է լինեն կլորացված՝ հեշտ և արդյունավետ ախտահանման ու մաքրման նպատակով։ Ջերմամեկուսացումը պետք է իրականացված լինի բարձր խտության, CFC չպարունակող պոլիուրեթանային (PUR) փրփուրով՝ առնվազն 45 մմ հաստությամբ։ Դուռը պետք է լինի երկշերտ ապակեպատ, ինքնափակվող մեխանիզմով, ներկառուցված բռնակով և ամբողջ պարագծով տեղադրված մագնիսական սիլիկոնե խցանմամբ։ Ներքին լուսավորությունը պետք է լինի LED, որն ավտոմատ միանա դուռը բացելիս։ Սառնարանը պետք է համալրված լինի առնվազն 4 բարձրությամբ կարգավորվող մետաղական դարակներով, որոնք

						ունեն PVC ծածկույթ և յուրաքանչյուրը դիմանում է առնվազն 35 կգ բեռնվածության։ Համալրման մեջ պետք է ներառված լինեն նաև դռան փական և առնվազն 2 կարգավորվող առջևի հենակներ։ Սառեցման համակարգը պետք է լինի դինամիկ՝ օդի հարկադիր շրջանառությամբ, ապահովելով ջերմաստիճանի հավասարաչափ բաշխում ամբողջ խցիկում։ Դուռը բացելիս գոլորշացուցիչի օդափոխիչը պետք է ավտոմատ անջատվի։ Կոմպրեսորը պետք է լինի ամբողջությամբ հերմետիկ։ Որպես սառնագեն պետք է օգտագործվի էկոլոգիապես անվտանգ R290, որը չի պարունակում CFC և HCFC նյութեր։ Հալեցման համակարգը պետք է լինի ամբողջությամբ ավտոմատ՝ կոնդենսատի ավտոմատ գոլորշիացմամբ՝ առանց օգտագործողի միջամտության։ Սարքավորման կառավարումը պետք է իրականացվի միկրոպրոցեսորային կարգավորիչի միջոցով։ Սարքը պետք է ունենա թվային LED ցուցադրիչ՝

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО "РВ ПРОДЖЕКТС" в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀԱՍԿԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/74 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар				
	фирменное наименование	товарный знак	марка	наименование производителя	технические характеристики
2	----	----	----	----	ջերմաստիճանի կարգավորման 0.1 °C քայլով: Ջերմաստիճանի վերահսկումը պետք է իրականացվի NTC ջերմաստիճանային տվիչի միջոցով: Սարքավորումը պետք է ունենա օգտվողի կարգավորումների գաղտնաբառային պաշտպանություն: Ցուցադրիչի վրա պետք է արտացոլվեն ընթացիկ ջերմաստիճանը, սահմանված ջերմաստիճանը, ֆունկցիոնալ ցուցիչները և վթարային ազդանշանների ցուցադրումը: Սառնարանը պետք է ունենա Volt-Free Contacts (չլարվող կոնտակտներ)՝ հեռահար մոնիթորինգի համակարգին միացման համար: Տագնապային համակարգը պետք է ապահովի ձայնային և տեսողական ազդանշան դռան բաց լինելու, սահմանված առավելագույն կամ նվազագույն ջերմաստիճանի գերազանցման, ինչպես նաև ջերմաստիճանային տվիչի խափանման դեպքում: Ջերմաստիճանային տագնապների սահմանային արժեքները և դռան բաց լինելու տագնապի ակտիվացման ուշացման

					ժամանակը պետք է կարգավորվեն օգտագործողի կողմից։ Մատակարարվող սարքավորումը պետք է ունենա CE մակնշում և ուղեկցվի Եվրոպական միության համապատասխանության հայտարարագրով (EU Declaration of Conformity)։ Սարքավորումը պետք է համապատասխանի 2014/35/EU (Low Voltage Directive) և 2014/30/EU (Electromagnetic Compatibility Directive) եվրոպական դիրեկտիվների պահանջներին, ինչպես նաև EN/IEC 61010-1 («Լաբորատոր էլեկտրական սարքավորումների անվտանգության պահանջներ») և EN/IEC 61326-1 («Լաբորատոր սարքավորումների էլեկտրամագնիսական համատեղելիության պահանջներ») միջազգային ստանդարտներին։ Արտադրողը պետք է ունենա ISO 9001:2015 որակի կառավարման համակարգի գործող սերտիֆիկատ։ Նախընտրելի է նաև ISO 13485:2016 և ISO 14001:2015 սերտիֆիկատների առկայությունը։ Սարքավորման երաշխիքային ժամկետը պետք է սահմանվի

					առնվազն 12 ամիս։ Մատակարարը պարտավոր է սարքավորումը մատակարարել ամբողջական գործարանային համալրմամբ, տրամադրել շահագործման ձեռնարկը, սարքի անձնագիրը, երաշխիքային փաստաթղթերը և բոլոր այն փաստաթղթերը, որոնք հաստատում են սարքավորման համապատասխանությունը հայտարարված տեխնիկական բնութագրերին և անվտանգության պահանջներին։ Մատակարարումն իրականցվում է մատակարարի կողմից՝ քաղաք Գյումրի Գարեգին Նժդեհի 3/3 հասցեով, յուրաքանչյուր աշխատանքային օր, մինչև ժամը 16:00